

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1931 - Յուլիս-Օգոստոս - թիւ 7-8

էջ

ԽՄԲ. — Մուրաթեան վարժարան	289
» Ազգ. եկեղեցական ընտրութիւն	297
ՖԷՅԻԿԵԱՆ Հ. Ե. — Աշխարհաբարի հար- ցեր	298
ՔԻՐՏԵԱՆ Յ. — Վիշապը Հայկական գոր- գերուն մէջ	300
ՄԵՇԽԱՆԻՆՈՎ. — Խալտեական անտիկ արձանագրութիւն մը վանի Ս. Պօղոս Է. Կեղեցւոյն մէջ (Թրգմ. Գ. Ք.)	305
Փ. Հ. Ե. — Ատրպետի 50ամեայ գրկին . յորբեկանը	307
ԱՏՐՊԵՏ. — Վիշապազանց պաշտամունքը .	308
ԹՈՐՈՍԵԱՆ ՏՈՒԹ. Վ. — Հայ բժշկական արձանագրաբանութիւն	320
ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — Դանիէլ վարուժան	328
ԱԼԻՇԱՆ. — Հայրենի երգ (Թրգ. Հ. Ե. Փ.)	332
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. Վ. — Յօլաքում	333
ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ. — Այս հայելին անտա- ման. — Այս տրամութեան բանալին	334
Յ. Կ. — Դաստիարակիս	335
ՍՐԱՊԻՆԵԱՆ Յ. — Մշակին. — Վերջալոյս	335
ԴԱՌԹԵԱՆ Յ. — Մուսա լեռ	336
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. Վ. «Հրանդ» ամբող- ջական երկեր	337
ԵՐԵՄԵԱՆ Հ. ՍԻՄՈՆ. — «Poèmes d'Orient» հաւաքանի, «Անահտական» Սօս Վանի, «Կեանքի դասեր» և «Մահաթմա» Գարա- կիւլեանի, «Պատմ. Ամերիկահայ քղերկն. կուսակցութեանց	339
ՓԷՅԻԿԵԱՆ Հ. Ե. — «Ընդարձակ տարե- ցոյց Ս. Փ. Ազգ. հիւանդանոցի», «Պէգճեան Մայր վրժին» Թ. Ազատեանի, «Ուղեու- րութիւն յեթովպիա» Գեորգ Արքեպօս. Արս- լանեանի	343
*** — L'enluminure arménienne pro- fane par F. Macler	347
ՄՈՒԹԱՅԵԱՆ Զ. — Գեղարուեստի կազմա- ւորում (Ճիւղթիւ)	348
ԽՄԲ. — Լէոնարտոյ Տա Վինչիի մէկ գործը հայու մը սեփականութիւն	361
ԳԵԹԹԷ. — Գէօք Յոն Բերիշինզըն (Թրգ. Յակոբ-Գրիգոր)	363
ԿԻՐԵԳԵԱՆ ՓՐՈՅ. Լ. — Երկհազարամ- եակ մը (Վարպեան ու Աշկերաբ)	369

(Շար. տես կողքին Գ. էջը)

SOMMAIRE

1931 - Juillet - Août - numéro 7-8

р.

Réd. — Le Collège «Samuel Moorat»; Enseignement Supérieur Libre	289
» Elections des Prélats Arméniens	297
Paitchikian P. E. — Etudes sur la lan- gue arménienne moderne	298
Kurdian H. — Le Dragon dans les tapis arméniens	300
Mestchaninov I. — Inscription inédite Khalde dans l'église Sourp Pogos, Van. (trad. par G. K.)	305
P. E. P. — Jubilé de la vie littéraire de M.r Atrpet	307
Atrpet. — Le culte des Dragons	308
Torkomian Doct. V. — Epigraphie médicale arménienne	320
Erémian P. S. — Daniel Varoujan	328
Alishan P. L. — Chant à la Patrie (trad. par P. E. P.)	332
Hovhannessian P. V. — Mirage	333
Arsène-Yergath. — Miroir infini. — Clef de tristesse	334
P. G. — A mon Précepteur	335
Srabionian J. — L'Ouvrier. — Cré- puscule	335
Davidian A. — Le mont Moussa	336
Hovhannessian P. V. — L'Oeuvre complète de Hrant (Révision)	337
Erémian P. S. — «Poèmes d'Orient» de Navarian, «Անահտական» de Sos Vani, «Leçons pour la vie» et «Mahathma Gan- dhi» de Karagulian, «Hist. des partis po- litiques arm.» de Djismédjian	339
Paitchikian P. Elie. — «Almanach de de l'hôpital arm. à Consple», «Le Col- lège Besdjian» par T. Azadian, «Voyage en Ethiopie» par Mgr. G. Arslanian	343
*** — «L'enluminure arménienne pro- fane» par Prof. F. Macler	347
Moutafian Z. — Formation de l'Art Romain: Giotto	348
Réd. — Un trésor d'art de L. da Vinci propriété de Mr. G. Aharonian	361
Goethe. Goetz de Berlichingen (trad. par Hagop-Krikor)	363
Gurékian Prof. L. — Virgile (pour le bimillénaire)	369

(Voir la suite p. 3 de la couverture)



1843-1931

ԲՈՎԱՆ - ՕԳՈՍՏՈՍ

ԹԻՒ 7-8

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՌԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԶԹ. ՌԵԶ-ՌԵԶԱ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒՍՄԱՆՑ ԱԶԱՏ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄԱՍՆԱՃԻՂ ՓԱՐԺԻԶԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ

ԱԶԳԵՐՈՒ զոյութեան յաւերժացումին
և քաղաքակրթութեան մեծագոյն ազդակը
անշուշտ սերունդներուն կրթութեան և
դաստիարակութեան մէջ պէտք է փնտռենք.
Եւ այս տեսակէտն այնքան աւելի զօրեղ
և համոզիչ է, մանաւանդ այսօր, մեր հայ
զաղութներուն համար, որքան օտարաց-
ման և աշխատեցողութեան վերահաս վտանգները
անխուսափելի ճակատագրով կը սպառնան
մեր ազգային կեանքին:
Միջազգեցի արհաւիրքներէն պրծող-
ներն անգամ դեռ նոյնքան զարհուրանքով
ու սարսուռով կ'անցնին օտարութեան այս
անապատին մէջէն որ կը լափիլդէ մեր
նշխարեալ մնացորդներն անգամ իրենց
անցքին վրայ. ազգային կրթական հաս-
տատութիւններն են միայն որ ովասիսի
մը պէս կեանքի և գեղեցիկ ապագայի յոյ-

սերու ժպիտ մը կը ցոլացնեն մեր երեսնե-
րուն, և մենք անզուսպ և անդիմադիր
թափով կարծես ներս կը խուժենք այդ ազ-
գային սրբարաններուն մէջ, ուր մեր ցեղին
հաւատքը, լեզուն, և բովանդակ աւան-
դութիւններն են որ կը ծնին մեր վաղուան
սերունդը ու մեզ ալ կ'ապրեցնեն հայ
կեանքով, անոր ապագայի տեսիլներով ու
մեր մեղմադձ, կարօտակէզ ու հայրենա-
րադձ հոգիներուն մէջ կը վերապրի հայ-
րենի ծուխն ու ծխանք:
Միջազգեցի Միարանութիւնը, որ հայ
ազգին սրտին հետ անմեկին կ'ապրի ու կը
բարախէ միշտ մեր համայնքին հրճուանքի
և սուրբ պահերուն, գիտակից ազգային
զոյութեան, ապառնացող ահեղ վտանգին,
կրթական մեծ հաստատութիւն մը կանգ-
նեց, ահա երեք տարի է, ի գին մեծամեծ


ԲԱԶՄ. ԲՈՎԱՆ-ՕԳՈՍՏՈՍ 1931

զոհողութիւններու, Եւրոպական քաղաքակրթութեան մեծագոյն կեդրոնը, Պրանսայի սրտին մէջ, Սեւրի գեղածիծաղ ափերուն վրայ, հոն՝ ուր քսան հազար հայեր կը պանդխտին:

Ահա այդ ազգային հաստատութեան մեծագոյն տօներն ու փառքերն է որ այս էջերուն մէջ պիտի արձանագրենք: Եւ զխաւորապէս տարւոյս Յուլիս 5ի հանդիսաւորութիւնը որ յաղթանակէ մ'աւելի փառաւոր էր Մուրատեան վարժարանին

րանը շնորհիւ Պրանսական կառավարութեան բարեացակամութեան եւ իր քաղաքական տեսչին՝ Հրամանատար Պարոն Զատիկ խանգատեանի անխոնջ ջանքերուն:

Պրանսական կառավարութեան այդ բարձր հրովարտակին զօրութեամբ ոչ միայն մեր վարժարանը ինքնուրոյն, ինքնավար բարձրագոյն հաստատութիւն մը կը դառնայ՝ հաւասար նոյն երկրի պետականներուն, այլ միանգամայն իրաւասութիւն ունի հայագիտական ուսմանց ուսուցիչ ալ



Մուրատեան վարժարան

համար, որովհետեւ ան այնպիսի բարձր աստիճանի մը հասաւ, որուն նմանը զեռէք արձանագրուած իր տարեգրութեանց մէջ, եւ որ համօրէն Հայ ազգին պարծանք եւ արդար հպարտութիւն կրնայ ներշնչել:

Արդարեւ մեր Միլիթարեան հաստատութիւններուն արժանավայել շքեղութեամբ այդ օրը տօնուեցաւ Մուրատեան վարժարանի հանդիսաւոր մուտքը Փարիզի Ակադեմիային մէջ իբրեւ Քարճրագոյն Ուսմանց Հաստատութիւն (Enseignement Supérieur Libre): Բացառիկ եւ անզուգական յաջողութիւն՝ որուն արժանացաւ վարժա-

հանելու իր ծոցէն Փարիզի Ակադեմիային վաւերացումով:

Ու հայ մանկտին՝ երջանիկ իր ցեղի բովանդակ լեզուական, պատմական ու գրական հարստութեան ճոխ պաշարով, միանգամայն բախտաւորութիւնը պիտի ունենայ միջազգային այդ բարձր կեդրոնէն արեւելք տանելու ինչ որ գեղեցիկ է եւ Արեւմտեան քաղաքակրթութեան լաւագոյն ծաղիկը. ու այսպէս պիտի շարունակուի եւ երկարի դարերու ծոցին՝ աւանդական ասպարէզը եւ լուսաւոր շաւիղը մեր անմահ Թարգմանիչներու դասերուն, որ Սա-

հակի ու Մեսրոպի հետ մեր Ոսկի դարն ու պատմութեան եւ քաղաքակրթութեան ամենէն փառահեղ եւ պանծալի դարը հիմնեցին, Մայր Հայրենիք փոխադրելով Աթէնքէն, Բիւզանդիոնէն, Աղեքսանդրիայէն եւ Հոմմէն ինչ որ լոյս էր եւ գիտութիւն:

ստրիական ճնշումներէն եւ միջամտութենէն զերծ մնալու համար:

Ու հոն ալ քառորդ դարու արդիւնալից կեանքին դաւել կը սպառնար Փրանկ-Բրուսական պատերազմը: Այս անգամ կը փութար ապաւինիլ եւ զիրկընդիսաւոր զու-



Մուրատեան վարժարանի վերաբացման համադիսին գեղեցիկ յուշանկարը

Մենք պիտի չուզենք այս անձուկ էջերուն մէջ վերյիշել Մուրատեան վարժարանի պատմական անցեալը իր նախկին շէնքերէն, երբ հիմնուած 1834ին ի Բաւուա, հազիւ տասնեակ մը բոլորած էր՝ արդէն 1846ին Պրանսական ազատ երկրին մէջ կը փոխադրէր իր բոյնը, Ա-

գուիլ իր Բոյր վարժարանին հետ՝ վեհեակոյ չնաշխարհիկ կղզիներու ծոցին մէջ. ու այսպէս 1870ին կը կազմուէր Ս. Ղազարէն ճառագայթող Միլիթարի շունչին տակ Մուրատ - Ռափայէլեան միացեալ վարժարանը որ այնքան մեծ ու փրկարար դեր խաղացած է մեր ազգային հազարա-

ւոր սերունդներու բարոյական ու մտաւոր կրթութեան, ու կը շարունակէ միշտ:

Վաթսուն տարիներ անցան այն օրէն. վաթսուն զարուններու վերադարձին՝ Ֆրանսայի ոստանը սպասեց Միխիթարեան հայրերու, քանի որ խոստացած էինք՝ ի նպաստ հայ գաղութին, նորոգելու հին կապերը նոր փառքերով:

Նախախնամական եղաւ 1928 թուականը: Այդ տարուան աշնան՝ Միխիթարեան Միաբանութիւնը վերստին կազմեց Փարիզի մէջ բոյնը հայ պանդուխտին, Սէն գետի ծիծաղկոտ ափերուն վրայ, ինչպէս առիթ ունեցանք հրատարակելու ժամանակին թերթիս մէջ: Երկու տարի վերջ, 1930ի Յունիս Տին էր որ տեղի կ'ունենար մեծ հանդէսը Մուրատեան վարժարանի պաշտօնական վերաբացման. եւ մենք լուսնացիներ յատուկ դիտումով՝ վստահ միացնելու այդ հանդէսին նկարագիրը եւ պատմական էջը՝ որ որպէս յառաջարանը կը կազմէ այս տարուան, 1931ի Յունիս 5ի հանդիսաւոր հռչակումին նոյն վարժարանին իբրեւ Բարձրագոյն Ուսմանց Ազատ Հաստատութիւն՝ Ֆրանսական կառավարութեան հրովարտակով:

Մուրատեան վարժարանի վերաբացումը խանդավառութեամբ ողջունուեցաւ եւ երկար խօսեցաւ անոր վրայ մեծ դրուատիքով եւ մեծագոյն յոյսերով հայ եւ ֆրանսական մամուլը. եւ մենք ահա անոր վերջիշունն եւ ամփոփումն է որ կ'ընենք հոս «Բազմավէպ»ի էջերուն մէջ:

1930ի Յունիս 8ի հանդէսը տեղի կ'ունենար պարտէզին մէջ Փոմփատուրեան պալատին՝ որ Մուրատեան վարժարան էր այլեւս:

Կը նախագահէր նախկին վարչապետ Ժորժ Լէյկ՝ որ այնքան համակրութիւն եւ սէր կը տածէ մեր վարժարանին: Պաշտօնական անձերը շատ էին. Տեսթրիպա հիւպատոսը՝ ներկայացուցիչ Ֆրանսո, Արտաքին գործոց նախարարութեան, Հարկերայեւ Մանեքն՝ պատերազմական նախարարութեան կողմէն, Հարկերայեւ Վուազէն՝ Փարիզի զինուորական կառավարիչ

զօրավար Կուռոյի կողմէն, Գեր. Բրէֆէն՝ Փարիզի արքեպիսկոպոսին կողմէն, Պ. Փիքար՝ Ոստիկանութեան, Սորիոյ հիւպատոսը՝ իտալական դեսպանին. Սէն եւ Ուազի նահանգապետին կողմէն՝ Ընդհ. քարտուղարը, Սեւրի քաղաքապետը, Հանրի Լորէն եւ Լ. Սուլիէ՝ երեսփոխաններ. ակադեմականներէն Ժորժ Կոյիոյ եւ Հանրի Պորտոյ՝ իր դստեր Օր. Փօլ Հ. Պորտոյի հետ, հեղինակ «Տրապիզոնցի Անթառամ»ին, Տիկին Ժ. Լէյկ, Կոմս Պեռնար տը Մասքլարի, Ուս. Ֆ. Մաքլէր, Պ. Պ. Պուրկ, Սալինեաք, Տորէյիոյ գնդապետը: Մեր ազգայիններէն ներկայ էին Ուիտիս Ընդհ. Աբրահայրը Գերյ. Հ. Յովհան Վ. Ազգեր, Գերպ. Պահապանեան, Վառձապուհ Սըրբազան, Վարժարանիս մեծաւորը Գեր. Հ. Յովհաննէս Վ. Թորոսեան, Հ. Գարբիէլ Վ. Նահապետեան, Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան՝ վարժարանին տեսուչը, Հ. Վրթանէս Վ. Խանպէկեան՝ մատակարարը՝ Հ. Սրապիոն Ուլուհոճեան՝ ուսումնապետը եւ դեռ մեր հայրերէն Հ. Քերովրէ Վ. Զրաքեան, Հ. Ղեւոնդ Վ. Տայեան եւ աշխարհիկ կղերէն Գեր. Պ. Քէտիճեան, Գեր. Յ. Պարիկեան, Ալեքսան Վ. Սիրունեան եւն եկեղեցականներ. ու մեր աշխարհիկ աւագանիէն ու մտաւորականներէն՝ Պ. Պ. Ա. Ահարոնեան, Ա. Խատիսեան, Գ. Նուրատունկեան, Գ. Սինապեան, Թորգոմեան, Զօպանեան, Ղուկասեան, Զաւրեան, Խաահակեան, Մուրատ-Ռափայէլեան նախկին աշակերտներ եւ բազմաթիւ ազգայիններ:

Մայրսէյյէզն ու Բամ փորոտանը՝ զոր կը նուագէր զինուորական շեփորախումբը՝ հանդէսը կը բանային, եւ պաշտօնական հիւրերը այդ պահուն կ'երթային բազմելու իրենց համար յատկապէս պատրաստուած ամպհովանիի մը տակ:

Հանդէսի նախագահին ականարկով Պ. Զ. Խանգատեան՝ քաղաքական տեսուչը Մուրատեան վարժարանին՝ կը յայտարարէր թէ վերաբացում էր Մուրատեան վարժարանը. ու համառօտ պատմականը կ'ընէր նախկին շրջանին, ի Բարիզ հաստատուելը Լուի Ֆիլիպի հրովարտակով 1846ին,



Պաշտօնական ամենաւորութիւնները

Նախկին Նախարար Ժ. Լէյկ, իր աջին ունենալով Ուիտիս Ընդհ. Աբրահայր Գերյ. Հ. Յ. Ազգեր, Գերպ. Պահապանեան եւ Ժ. Կոյիոյ. իր ձախին՝ Տեսթրիպա, Վառձապուհ Ս., իտ. ներկայացուցիչը, Հ. Պորտոյ

1870ին փոխադրութիւնը ի վենետիկ Փրանկ-Բրուսական պատերազմով, եւ ի վերջոյ վերադարձը Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ յետ 60 տարիներու, տրուած խոստման համեմատ:

Այնուհետեւ կը պարզէր վարժարանին ծրագիրը իր զանազան ճիւղերուն մէջ.

Ա. իբրեւ կրկրորդական կրթութիւն.

Բ. Հայագիտական Ուսմանց բարձր հաստատութիւն.

Գ. Հայկական Ճեմարան՝ անգամ Փարիզի եւ Երեւանի Ակադեմիաներուն:

Պ. Զ. Խանգատեանի վերջին խօսքերուն՝ զինուորական շեփորները կը հնչէին եւ Տիկին Լէյկ կը պարզէր Ֆրանսո, զրօշը, ուզելով խորհրդանշել այդ հանդիսաւոր վայրկեանին Ֆրանսայի եւ Սիրիոյ Վանաւորութիւնը Ֆրանսայի եւ Սիրիոյ Հայ գաղութներուն եւ Մուրատեան վարժարանին վրայ:

Խօսք կ'առնէր ապա Հ. Գարբիէլ Վ.

Նահապետեան, երախտագէտ շեշտին մէջ թուելով Ֆրանսո. կառավարութեան ընձեռած մենաշնորհները Մուրատեան վարժարանին, ու Լուի Ֆիլիպի անուան քով յիշեց նախարար Կիզոն, Լամարթին, Վիկտոր Հիւկոյ, Մաթիէօ ծովային նախարարը, որոնք նախագահ բազմած էին երբեմն Մուրատեան վարժարանի տարեկան հանդէսներուն, եւ անոնցմէ վեր Պոնափարթը որ բացառիկ շնորհքով մը, 1810ին Սէն Քլուի մէջ ստորագրած հրովարտակով կը խընայէր Ս. Ղազարու հայ միանձանց՝ բոլոր իտալիոյ կրօնական հաստատութիւնները ջնջած պահուն՝ ոչ միայն այլ նաեւ պաշտօնապէս կը հաստատէր Միխիթարեան Միաբանութիւնը իբրեւ Հայկական Ճեմարան:

Մուրատ-Ռափայէլեան նախկին աշակերտաց կողմէն Պ. Գ. Սինապեան գովքն ըրաւ այդ կրթութեան յարկին, անոր կատարած դերին եւ ազգին ընծայած պետական, զրական եւն մեծ ղէմքերուն:

Պիտի փափաքէինք հոս բառ առ բառ յիշել Պ. Հանրի Լորէնի՝ թղթակից Ֆրանս. Ակադեմիային՝ սրտաբուխ ու գեղեցկահիւս խօսքերը մեր Միխիթարեան Միաբանութեան կեանքին, գործին ու նպատակներուն շուրջ։ Ան դրուատեց միանգամայն հայ ազգը, անոր պատմական անցեալն ու ցեղային բարձր ձիրքերը, յորդորելով պահել եւ զարգացնել զանոնք ամէն գնով՝ առանց տեղի տալու օտարացուցիչ հոսանքներուն։

տոկունութեան եւ իր բարձր քաղաքակրթութեան համար, ու սրտապնդեց զիմացրաւելու ամէն վտանգի՝ բարձր պահելով ազգութեան պարծանքներն եւ կեանքը։

Ամբողջ հանդէսի պահուն խանդավառութիւնը մեծ էր, բոլոր բանախօսները ծափահարուեցան երկար. նուագախումբը գեղեցիկ երգեր կը նուագէր միջանկեալ պահերուն. եւ պատմական օրուան յիշատակն անմահացնելու համար շարժանկար ու լու-



Մուրատեան վարժարանի վերաբացումը տօնող համախառնակամերումն
ընդմութիւնը (1930 Յունիս 8ին)

Միխիթարեանց կատարած դերը մեր ազգին մէջ, ինչպէս նաեւ նոյն մեր ազգը Եւրոպայի ծանօթացնելուն՝ պարգեց Ռիւսիս Գերյ. Աբբահայրը, շնորհակալութեան խորին արտայայտութիւններ ընելով Ֆրանսական կառավարութեան։

Վերջին խօսքն առաւ հանդիսին նախագահը, Պ. Ժորժ Լէյկ. հակառակ իր յառաջացեալ տարիքին՝ երիտասարդի մը խանդն ու կորովը թափեց իր սրտէն դրուատելով հայ ազգը իր հնութեան, իր

սանկար քաջուցան, ինչպէս կը տեսնուի հոս դրուած նմոյշներէն։

Այդ մեծ օրը, փութացած էին հեռագրով իրենց շնորհաւորութիւնն եւ ուրախակցութիւն յայտնել բարձրաստիճան ու պետական անձնաւորութիւններ։

Այսպէս հեռագիրներ ղրկած էին՝ ծիրանաւոր փաշելի՝ Ս. Քահանայապետին կողմէն, Խտալիոյ դեսպան Մանձոնի, Խտալիոյ Երեսփոխանական ժողովի նախագահ Ճիւրիաթի, Միխիթարեան Միաբանու-

թիւնս, Մուրատ — Ռափայէլեան վարժարանի Տեսչութիւնը, եւն եւն։

Նամակներ ղրկած էին՝ Լուի Պարթու նախկին վարչապետ եւ ակադեմական, արտաքին գործոց նախարարը Պրիան, փառիզի հելլէն դեսպանը՝ փոլիթիս, Ֆրանսական փոխ-վարչապետը, Երեսփոխան Լուի Մարէն, փոլ Պոնքոէր, Սէնի նահանգապետը Ռընար, նահանգային ընդ. Ժո-

կ'անցնինք պարզելու պատմականը յաջող ձեռնարկին որով կարելի եղաւ ստանալ պետական հրովարտակը՝ վարժարանը Բարձրագոյն Ուսմանց Ազատ Հաստատութիւն կազմելու համար։

Մուրատեան վարժարանի Տեսչութիւնը տարւոյս Ապրիլ 10 թուակիր աղերսագրով, ուղղուած Ֆրանսական Ակադեմիայի վերատեսչութեան, բացատրելէ վերջ վարժա-



Պ. Ժ. Լէյկ. իր աջին՝ Գերյ. Պահագանեան. ձախին՝ Ռիւսիս Գերյ. Աբբահայրը, Պ. Զ. Խանդատեան (Եսեւի գիծը) վաւարապուհ Ս., իր աջին՝ Ժ. Կոյիւոյ, (Եսեւի Է. Սուրիէ), Հ. Պորտոյ. ձախին՝ Հ. Լորէն

ղովի նախագահ Տըլաօէն, փարիզի թաղապետական ընդհ. ժողովի նախագահ Տօտինիէ, Սիւրիոյ Ֆրանսական Մարզպանութեան պատուիրակ փէր Ալիփ, Գերյ. Քրէփէն, փարիզի համալսարանի վերատեսուչ Շառլէթի, Հայագիտական ընկերութեան նախագահ Շարլը Տիւ, Ալիանս Ֆրանսէզի ընդհ. քարտուղար փոլ Լապէ, Սէն եւ Ուազ նահանգի հրամանատար զօր. Ժոլի, եւ Նահանգապետը, եւ դեռ շատեր պզգային եւ օտար շրջանակներէ։

Այսչափ բացման հանդէսի մասին։

րանին հետապնդած նպատակները որպէս յառաջապահ Ֆրանս. մշակոյթին եւ քաղաքակրթութեան մերձաւոր Արեւելքի մէջ, պատմական ակնարկ մը կու տար Մուրատեան վարժարանի անցեալին մէջ ունեցած գործունէութեան վրայ, շեշտելով նմանապէս Վենետիոյ Հայկական Ճեմարանին պաշտօնական ճանաչումը Նաբոլէոն Ա.ի կողմէ, եւ 1845ի ու 1848ի կայսերական հրովարտակները Լուի Փիլիփի օրով, Մուրատեան վարժարանը կը ճանչցուէր իբր կրթական անկախ հաստատութիւն՝ վա-

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԲԳԷՆ ԵՊՍ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Ազգին սրտին հետ թաքախելով անցեալ տարի ցաշով անոր մեծ սուգերը գոռեցինք. աշտը ալ կարգն է որ անոր ոչրախ լոշերն արձանագրենք նոյն աշտ թերթիս էջերուն մէջ:

Եւ առաջինը՝ Բաբգէն Ս. ի ընտրութիւնը (Ապրիլ 26) որպէս արքայակից, օգնական եւ շարունակող ազգաշէն գործին Ստոյ Կարողիկոս Վեհափառ Սահակ հայրապետին որ այնքան արցունք արթեց եւ այնքան սէր եւ իմաստք թափեց մեր ազգին ահաւոր սոխտէն փրկուած բեկորներուն:

Համառօտ տողերու մէջ լեւր կրնար ամփոփել Վեհաշնորհին կեանքն ու գործը, իբրեւ եկեղեցական առաջնորդ եւ իբրեւ բանասէր:

Կը մաղթենք սրտագին արեւշատութիւն, կորով եւ իմաստութիւն արդարացնելու Սզգին եւ Ստոյ Վեհափառին իր վրայ դրած լաւագոյն յոյսերը:

ԹՈՐԳՈՍ ԵՊՍ. ՊԱՏՐԻԱՐԲ Ս. ԵՐՈՒՍԱՆԷՍԻ

Ողբացեալ Դոշրեան կը վերակենդանանայ յանձին լորրնտիր Թորգոս Սրբազանի որ Գահիրէի արքունի կը թաքնուանայ Ս. Երուսաղէմի Պատրիարքութեան՝ Ս. Յակոբեանց պատմական արքունի (Յունիս 16):

Երբ Ազգը դարձեալ կրնայ ողջունել Բանաստեղծ Պատրիարք մը, տաւայն աւելի կարօտ է թարի եւ իմաստուն հովիւներու, մանաւանդ անոնք ու կայն աւելի կարօտ է թարի եւ իմաստուն հովիւներու, մանաւանդ անոնք ու կայն աւելի կարօտ է թարի եւ իմաստուն հովիւներու:

Այդ տեսակետով է մեր մաղթանքն ալ մեր ջերմագին ընտրութեանց փոխընկեր հետ գոր կը լուրջենք Սրբազան Պատրիարքին, բեղուն եւ ազգանշնորհ գործունէութեան մը տեսնով:

ԳԵՐ. Ն. ՄԵՍՐՈՊ ՆԱՊՈԶԵԱՆ

ԸՆԴՆ. ԱԲԲԱՅ ՎԻԵՆԱՅԻ ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

Եղբայրական անկեղծ սիրով կը մասնակցենք ոչրախութեան մեր քոյր Միաբանութեան որ գիտցաւ իրեն գոշի ընտրել (Յունիս 16) իր համետ թայց արժանաւոր մէկ անդամը՝ Գեր Ն. Հապովեան՝ որպէս Ընդհ. Արքանայր: Չերմօրէն կը մաղթենք լորրնտիր Գեր. Արքանայր կորով եւ իմաստունութիւն մեծին Միաբարայ կրօնասէր եւ ազգանշնորհ հոգով վարելու իր սիրելի Միաբանութիւնը միշտ դէպ ի զարգացում իր նախորդներուն ընթացած շահիղներով առաքելական, դատարարական եւ գրական մշակոյթի աւազարեկներուն մէջ որոնց այնքան կը կարօտի մեր ազգը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ « ԲԱԶՄԱՎԷՊ » Ի

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

յեւելով հանդերձ Պրանս. արքայական կառավարութեան բարձր պաշտպանութիւնը:

Վարժարանին Տեսչութիւնը իր նոյն թուակիր աղերսագրով կը խնդրէր որ Պրանսայի ներկայ հասարակապետական կառավարութիւնն ալ, հետեւելով իր նախորդներուն ընդգծած լուսաւոր ճանապարհին, ոչ միայն վերահաստատէր Վարժարանին նախկին իրաւունքները, այլ նաեւ ընդունէր զայն Փարիզի Ակադեմիային մէջ, իբր Բարձրագոյն Ուսմանց Հաստատութիւն:

Կրթական նախարարութիւնը եւ Ակադեմիայի վերատեսուէր ընդառաջ երթալով Տեսչութեան ուղղած աղերսագրին, 22 Մայիս 1931 թուակիր հրամանագրով մը եւ հիմնուած «12 Յունիս 1875» ի օրէնքին 3^{րդ} յօդուածի տրամադրութիւններուն վերայ, կը հաստատէին Մուրատեան վարժարանը իր ներկայ բարձր դիրքին մէջ:

Փարիզի Ակադեմիային մէջ Վարժարանին հանդիսաւոր մուտքն է որ տօնուեցաւ Յունիս 5ին «Պէշիկիթաշեան» թատերասրահին մէջ՝ կառուցուած Մ. Ռ. Ն. Աշակերտաց ջանքերով և օրինակելի գոհողութիւններով. միաժամանակ Մրցանակարաշխութեան հանդէսը, հայ եւ ֆրանսացի ծովածաւալ բազմութեան մ'առջեւ:

Հետեւելով Լաժարդիներու, Վիկտոր Հիւկոններու եւ Կիզոններու աւանդութեան, սոյն հանդիսաւորութեանց՝ յանուն Պրանսական կառավարութեան՝ կը նախագահէր Պրն. Հանրի Փաթէ, երեսփոխան Փարիզի եւ Խորհրդարանի փոխ-նախագահ: Նմանապէս ներկայ էին Պ. Պ. Հանրի Լորէն, երեսփոխան Ժիրոնտի, Է. Սուլիէ, երեսփոխան Փարիզի, Փարիզի Ակադեմիայի ընդհ. վերատեսուէր, Խաւակաւ Արքայական կառավարութեան կողմէ Փարիզի փոխհիւպատոսը եւ Խաւակաւ դեսպանատան մէկ ներկայացուցիչը, Հայ եւ Ֆրանսական մամուլէն ներկայացուցիչներ, Փարիզահայ նշանաւոր անձնաւորութիւններ:

Այս անգամ ալ «Մարսէլյէզ»-ով եւ «Բամ փորոտան»-ով հանդէսը բացուելէն վերջ խօսք առաւ Վարժարանին քաղաքական Տեսուչ Պ. Խանգատեան, որ ֆրանսերէն լեզուով բացատրեց օրուան նշանակութիւնը եւ մատնանշեց Պրանս. կառավարութեան ասպետական վերաբերմունքը հանդէպ Միաբանութեան Միաբանութեան:

Հետզհետէ բեմ բարձրացան Պ. Պ. Հանրի Լորէն, Է. Սուլիէ եւ Հանրի Փաթէ որոնք հրաշունչ բառերով դրուատիքն ըրին Միաբանութեան Միաբանութեանս դարաւոր գործունէութեան, Հայ ազգին եւ Հայ հանձնարար խօսք առաւ վարժարանին Տեսուչ Հ. Սահակ Վ. Տէր-Մովսէսեան, որ իր պատմաբանի յատուկ շեշտով թուեց Խաւակաւ եւ Պրանսական կառավարութեանց բարոյական եւ նիւթական օժանդակութիւնը՝ Միաբանութեան հաստատութեանց:

Հ. Սահակ Վ. մատնանշեց նաեւ Մուրատեան վարժարանը իբր կարեւոր ազդակ մը Հայ ժողովուրդի Միութեան գործին նկատմամբ, եւ շեշտեց յատկապէս հայ մանկուոյն միօրինակ դաստիարակութեան դժուարին գործը:

Բանախօսութեանց յաջորդեցին արտասանութիւններ եւ երգեր Վարժարանին սաներուն կողմէն, ինչպէս նաեւ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի Նախկին Աշակերտաց նախաձեռնութեամբ կազմուած «Կիլիկիա» երգչախումբէն:

Հանդէսէն վերջ հրաւիրեալները հիւրասիրուեցան. եւ փոմփատուրեան հինաւորաց զդեակէն մեկնելու պահուն անոնց երեսին վրայ կը ճառագայթէր անհուն գոհունակութիւն մը եւ ազգային արդար խորխտանքի ժպիտը որ ծիրանեփառ արշալոյսի պէս կը ցոլանար գեղեցիկ օրուան մը կարապետութեամբ:

Անոնք մեկնեցան կրկնապէս երախտագէտ հանդէպ Պրանսական կառավարութեան եւ Միաբանութեան Միաբանութեան բազմավաստակ Հայերուն որ գիտցան հիմնել եւ քիչ ժամանակի մէջ այնքան բարեմասնութիւններով օժտել Մուրատեան վարժարանը՝ իբրեւ ատրուշան մը ուր Հայ ցեղի սրբազան հուրը պիտի վառի անշէջ եւ յաւերժօրէն արծարծուն: